№ 260 ԿԻՐԱԿԻ, 21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1910 ԿԻՐԱԿԻ, 21 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 260

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՍԻՆԷՄՕ-ԹԱՏՐՈՆ
„ՄՕԴԷՐՆ"
ՌԻՋՋԻ շինութիւն

Այսօր, ծրագրից դուրս, ցոյց կը տրվի կոմս ԼԵՎ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ
ՏՈԼՍՏՈՅԻ ԹԱՂՈՒՄԸ Եասնայա-Պօլեանայում: 1289.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշով:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ:

Հին բաժանորդներից խնդրվում է կցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտարարելու, որ այսօր, նոյեմբերի 21-ին Գանձարանիս հանգուցեալ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ

յիշատակին կատարվելու է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Վանքի եկեղեցում, առաւօտեան ժամը $11^1/_2$-ին: 1292. 1—1

Այրի ՍՕՖԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԸ, Պօղոս և Եղիսաբէթ Նաղիբեանցները յայտնում են իրանց խորին շնորհակալութիւնը այն բոլոր հիմնարկութիւններին և անհատներին, որոնք

ՋԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

մահվան առիթով արտայայտեցին իրանց ցաւակցութիւնն ու յարգանքը թէ իրանց ներկայութեամբ և թէ հեռագիրներով ու նամակներով: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
օգտին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԶՈՒԲԱԼՕՎԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆԸ
Ուրբաթ, դեկտեմբերի 3-ին, 1910 թ., կը ներկայացնէ
ՖՐՈՒ-ՖՐՈՒ
Պիէս 5 գործող., հեղ. Մէյլակի և Հալէվիի
Մասնակցում են՝ տ. տ. Արաքս, Աշխէն, Գուլազեան, Դուրեան-Արմէնեան, Ժասմին, Ցասմիկ, պ. պ. Աբէլեան, Արմէնեան, Աւետեան, Զարիֆեան, Միրզոյեան, Ռշտունի:
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին:
Տոմսակները՝ 85 կ.—3 ր. արժող. ծախվում են Որբանոցում (Վօզնեսենսկայա № 26):
առ. (3 գ.) 1296. 2—1

Թիֆլիսի Ժողովարան
(Ձմեռային շէնութիւն)
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ
ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը՝ հայոց ներկայացում, զինուորական երաժշտական խումբ, սազանդար և ՊԱՐԵՐ:
ՇԱԲԱԹ օրերը՝ սազանդար:
ԿԻՐԱԿԻ օրերը՝ սինեմատօգրաֆ:
Հիւրերը մուտքի համար վճարում են՝ անդամների յանձնարարութեամբ՝ թէ կանայք և թէ տղամարդիկ—50-ական կոպ., իսկ ուսանողները՝ 25-ական կոպ.:
Երեկոյթների սկիզբը ժամը 8-ին:

НОВАЯ КНИГА
ПО ВОСТОКОВѢДѢНІЮ
„АРМЕНІЯ".
Путевые очерки и этюды Х. Ф. Б. ЛИНЧА.
Переводъ съ англійскаго Елизаветы Джунковской.
Въ 2-хъ томахъ. Со 197 иллюстр.
Томъ I.—Русскія провинціи. 597 стр.
Томъ II.—Турецкія провинціи. 679 стр.
Цѣна за два тома въ роскошныхъ переплетахъ 18 рублей.
Складъ изданія въ Центральной Книжной Торговлѣ въ Тифлисѣ.
(4.) առ. 1226. 5—4

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՈՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ռուսական էլեկտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բեռլինի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ակց. ընկ., Բեռլինի «ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԵՐՏ-ՎԷՐԿԷ» ակց. ընկ., Կոլոմենի մեքենագործական ընկ. եւ Եղբ. «ՊՐՕՍԼԷՅ» անգլիական գործարանի ներկայացուցիչներ:

ԷԼԵԿՏՐՕՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ ամեն տեսակ և ույժի մշտական և փոփոխող էլեկտր. հոսանքի համար: Էներգիայի յանձնումն որոշ հեռաւորութեան վրա: Քաղաքներ և մասնաւոր ձեռնարկութիւններ լուսաւորելու համար կենտրոնական կայարանի սարքում: Տրանսֆորմատորներ: Օդամղիչներ ամեն տեսակ նպատակի համար: Օզոնի օդամղիչներ:
ԷԼԵԿՏՐ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Մշտական և փոփոխվելիք լուսաւոր. համար մէկ և բազմափաս հոսանք: Երկաթուղային ազդանշան:
ՀԵՌԱԳՐԻ ԵՒ ՀԵՌԱԽՕՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Անթել հեռագիր: Հեռագրական ապարատներ: Ամեն տեսակ հեռախօսներ: Վտանգազերծ ազդանշան գործիքներ:
ԼԱՄՊԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	ԱՂԵՂՆԱՁԵՒ լամպաներ՝ ուշագրաւ և սովորական: Տնտեսական լամպաներ „ՏԱՆՏԱԼ" և „ՄԻ-ՖԱՏՐՈՆԵՑԻՆ ԼԱՄՊԱՆԵՐ": Լամպաներ ածխային թելով:

ՊԵՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեկտրական կառուցուածքների համար և այլն:
ՊՐԵՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ եւ ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման:
Տելեֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.

ՆԵՐԿ. 8. ԱԲՕՆԵՄԵՆՏԻ ՀԱՇԻՒՆ № 5.
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 15-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ՄԻՐՐԱ ԷՖՐՕՍ
Պիէս 4 արարուածով, Գորդինի, Թարգ. Մաժակի
Մասնակցում են. տ. տ. Ադամեան, Գուլազեան, Զարէլ, Մայսուրեան, Ցասմիկ, պ. պ. Ալլահվերդեան, Աւետեան. Մամիկոնեան, Միրզոյեան, Ղազարեան, Շահխաթունի և ուրիշ.
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է:
Շարունակվում է աբօնեմենտը 20 $^0/_0$ զիջումով: Ուսուցիչների և վարժուհիների համար 50 $^0/_0$-ով:
Երկուշաբթի, դեկտեմբերի 6 ին ՕՐ. ԱԴԱՄԵԱՆԻ բենեֆիսին «ՌՕՄԷՕ ԵՒ ՋՈՒԼԻԷՏ» Շէքսպիրի:
Գլխ. ռէժիսոր՝ Ս. Արմէնեան
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Տուրինեան, Գ. Լեոնեան
1287. 2—2

Գայիանեան Դպրոցի Հոգաբարձութիւնը խնդրում է Մողնու ծխականներին այսօր, կիրակի, նոյեմբերի 21-ին, շնորհ բերել ժողովի, համաձայն նախկին յայտարարութիւնների: ԿԱՆ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ԽՆԴԻՐՆԵՐ:
առ. 1295. 1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
[Նոյեմ. 7-ին չը կայացած ժողովի փոխարէն]
Այսօր նոյեմբ. 21-ին, առ. ժամը 12 ին
կայանալու է
ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
Օրակարգի խնդիրներն են.
1) Վարչութեան զեկուցումը իր գործունէութեան մասին:
2) Ընտրութիւններ՝ վարչութեան և վերստուգիչ յանձնաժողովի:
Ժողովը օրինական կը համարվի քանի անդամ էլ ներկայ լինի:
Վարչութիւն

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
I
ԾԱՂԿԵՓՈՒՆՋ
Ամենատարածված ընտիր երգերի ընդարձակ ժողովածու. երրորդ տպագրութիւն:
Գինն է 50 կոպ.
II
ԾԱՂՐԱԾՈՒ
Ժամանակակից կեանքից վերցրած հետաքրքրական և ծիծաղաշարժ անեկդօտների ընդարձակ ժողովածու:
Գինն է 50 կոպ.
III
ՌՈՒՍԵԱՆ ՊԱՆԴՈՒԽՏ
Օտարութեան դիմողների կեանքից վերցրած:
Գինն է 15 կոպ.
Գումարով գնողներին 20—25 $^0/_0$ զեղչ: Պահեստը «Կենտրօնական գրավաճառանոցում»:
Դիմել՝ Тифлисъ. Центральной книжной торговлѣ.
(4.) առ. 1297. 3—1

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Շատ տեղերից դիմումներ են անում մեզ ուղարկելու լրագիրը ձրիաբար այս ու այն հիմնարկութեան, դպրոցին, գրադարանին:

Մենք ամեն տարի ուղարկել ենք ձրի օրինակների մի որոշ թիւ և առաջիկայ 1911 թւականին էլ կուղարկենք: Բայց մեր ուղարկածները մի չնչին մասն են կազմում այն դիմումների, որ անում են իւրաքանչիւր տարի:

Խմբագրութիւնը թէ իր կողմից և թէ նուիրատուների կողմից ուղարկելով լրագիր ձրիաբար մի որոշ տեղ՝ իրաւունք ունի սպասելու, որ նախկին ձրի ընթերցողները այլ ևս դիմումներ չեն անի և հնարաւորութիւն կը տան, որ լրագրի նոյն օրինակները ուղարկվեն նոր տեղեր՝ նոր ընթերցողների:

Եթէ լրագիրը պահանջ է, եթէ նրա ընթերցողները մի քանի տարի շարունակ ստացել են և կարդացել են լրագիրը, բնական էր սպասել, որ նրանք այդ զգացվող պահանջի վերաբերութեամբ կը վարվեն նոյնպէս, ինչպէս իրանց առօրեայ ուրիշ պիտոյքների վերաբերութեամբ, որոնք ամենևին ձրիաբար չեն հայթայթվում:

Մենք լաւ հասկանում ենք այն հիմնարկութիւնների վիճակը, որոնք առհասարակ հարուստ չեն, պէտք ունեն նիւթական օժանդակութիւնների, և միևնոյն ժամանակ զգում են լրագրի անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը: Նրանք մտածում են՝ թէ ինչը կը պակսի մի խմբագրութեան, եթէ նա յատկացնի իրանց մի օրինակ ձրիաբար:

Ի հարկէ, մի օրինակը չնչին բան է: Բայց բանն այն է, որ դիմողը մէկը չէ, այլ հարիւրաւորներ են: Եւ ահա այդ հարիւրաւորներին բաւարարութիւն տալը անհնարին մի բան է:

Փոխանակ, որ իւրաքանչիւր հիմնարկութիւն իր փոքր ծախքով բաւարարութիւն տայ իր ընթերցասիրական պահանջին և հեշտութեամբ լուծվի խնդիրը, մենք տեսնում ենք, որ մեր իրականութեան մէջ սպասում են, որ լրագրի խմբագրութիւնները հազարների նուէրներ անեն այդ բազմաթիւ ընթերցասէրներին:

Եթէ հայ խմբագրութիւնները ունենային իսկապէս ապահովված ձեռնարկութիւններ մեծ հասոյթներով, դեռ կարելի էր ըմբռնել ընթերցասէրների մի մասի այդ ցանկութիւնը՝ կարդալ ձրիաբար, խմբագրութիւնների հաշւին:

Բայց այդպէս չէ իրականութիւնը: Հայ խմբագրութիւնները ամենևին նախանձելի նիւթական վիճակ չեն ունեցել երբէք: Եւ այն, ինչ որ նրանք մինչև այժմ արել են ձրիաբար ուղարկելով լրագիրը, եղել է զոհաբերութիւն նրանց կողմից:

Իսկ հասարակութիւնը լաւ չէ անում, յոյս կապելով ձրի ընթերցանութեան վրա:

Հասարակութիւնը պէտք է գիտենայ, որ լրագիրը պահպանվում է և պէտք է պահպանվի իր բաժանորդներով, վճարովի ընթերցանութեամբ և լրագրի սեփական հասոյթներով:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 19 նոյեմբերի

Վլադիվոստոկի դումայի ամենահպատակ հեռագրի առիթով Թագաւոր Կայսրը բարեհաճեց մակագրել.

Շնորհակալ եմ Վլադիվոստոկի քաղաքային դումայից արտայայտած զգացմունքների համար. քաղաքի շահերը մօտ են իմ սրտին. ցանկանում եմ Վլադիվոստոկի յետագայ զարգացումը, յօգուտ Մեր հեռաւոր խաղաղ օվկիանոսային ծայրերկրի: (Հ. Գ.)

Լոնդոն, 19 նոյեմբերի

Առաջիկայ ընտրութիւնների առիթով լրագիրները ընտրողներին յորդորում են լարել բոլոր ույժերը: Ունիօնիստները ընդգծում են այն մօրալ նշանակութիւնը, որ կը տանէր յաղթութիւնը Լոնդոնում, ուր շաբաթ օրը ընտրվելու են տասնեակ պատգամաւորներ:

Մինչև ցերեկվայ ժամը 12-ը ընտրվեցին 10 մինիստրներ, նախկին մինիստր Ուինդհէմ, Չեմբերլէն, չորս լիբերալ: Սրանից ընտրված են պահպանողականներ՝ Բալֆուր և Դենբէրի, որոնց հակառակ միւս թեկնածուները առաջ չեկան: (Հ. Գ.)

Հռոմ, 19 նոյեմբերի

Պատգամաւորների պալատ: Արտաքին գործերի մինիստրութեան բիւջէի վիճաբանութիւնների ժամանակ Սան-Ջուլիանօ յայտնեց. «Մեր արտաքին քաղաքականութիւնը ձգտում է պահպանելու խաղաղութիւնը և տերրիտօրիալ «Status quo»-ն: Սակայն բաւական չէ միայն խաղաղութիւնը. անհրաժեշտ է նաև հանգստօրէն հաստատել նրա երկարատևութեանը, որպէսզի մենք շարունակենք մեր գործունէութիւնը երկրի ներսում բարենորոգումներ գործադրելու վերաբերութեամբ: Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը ոչ մի յետին միտք չունի և հետամուտ է պարլամենտից և երկրից քանից ընդունված բացառիկ նպատակին: Եռապետեան դաշնակցութիւնը այդ քաղաքականութեան հաստատուն հիմունքն է: Իտալիան վայելում է միանգամայն համահաւասար իրաւունքներ իր դաշնակիցների միջև: Այնուհետև Սան-Ջուլիանօ մատնանշեց, որ Իտալիայի սրտագին բարեկամութիւնը Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի նկատմամբ լիակատար համապատասխանէ Եռապետեան միութեան ոգուն և ասաց, որ նա ամբողջ սրտից ողջունում է աւստրիական և ունգարական պատգամաւորութիւնների մէջ երևնալի յայտնած բարեկամական սրտագին յայտարարութիւնները: Քաղաքական հօրիզօնի վրա չը կայ ոչ մի այնպիսի հարց, որ կարող լինի տարաձայնութիւններ ստեղծել Իտալիայի և Թիւրքիայի միջև: Իտալիայի և Թիւրքիայի միջև գոյութիւն ունեն բարեկամական յարաբերութիւններ: Վերջում մինիստրը ասաց, որ կառավարութիւնը ներկայումս զբաղված է գաղթականութեան հարցի միջազգային կօնֆերէնցիա գումարելու ծրագրի մշակութեամբ: Կօնֆերէնցիան կայանալու է Հռոմում: (Հ. Գ.)

Հաագա, 19 նոյեմբերի

Պատգամաւորների պալատ: Արտաքին գործերի մինիստրը մինիստրութեան բիւջէի վիճաբանութիւնների ժամանակ կտրականապէս յայտնեց, որ չը կայ այնպիսի փաստ, որ առիթ տայ ենթադրելու՝ թէ որևէ արտասահմանեան մեծ պետութիւն միջամտէ Հոլլանդիայի ներքին գործերին: (Հ. Գ.)

Լիսաբօն, 19 նոյեմբերի

Մեծ հանդիսաւորութեամբ տօնվեց Պօրտուգալիայի սպանական տիրապետութիւնից ազատագրվելու տարեդարձը. Նաև տօն էր նոր հանրապետական դրօշակի: (Հ. Գ.)

Պարիզ, 19 նոյեմբերի

Պարլամենտական քննիչ յանձնաժողովը ֆինանսիստ Ռօշէտի գործի առիթով միաձայն կայացրեց իր որոշումը, որ կը յանձնվի պալատին իբրև բանաձևի նախագիծ:

Նախագծում մատնանշված է, թէ անհրաժեշտ է աւելի ապահով դարձնել ժողովրդական խնայողութիւնները, ուժեղացնել հսկողութիւնները այն դէպքերում, երբ խաբերայութեամբ վաճառքի են հանվում բօրսային արժէքները, և առաջարկվում է հեռացնել իշխանութիւնը և դատարանը, նմանօրինակ գործերի ժամանակ միջնորդի դեր կատարելուց: Բանաձևը յիշում է, որ 1908 թ. մարտին ներքին գործերի մինիստրը միջամտեց դատական գործին, դարձնելով վերջինս գրագրութեան առարկայ իր դիւանատան և դատախազի միջև, առանց յարաբերութեանց մէջ մտնելու արդարադատութեան մինիստրի հետ:

Լուարա գետի յորդանալու պատճառով Նանտ քաղաքի շատ մասերը մնացին ջրի տակ: Մի քանի գործարաններում աշխատանքները կանգ առան։ Կանոն և նրա շրջակայքը ջրասոյզ են եղել Օոն գետից։ (Հ. Գ.)

Բելգրադ, 19 Նոյեմբերի

Սկուպշչինան երէկ 94 ձայնով ընդդէմ 22-ի ընդունեց աւստրո-սերբիական առևտրական պայմանագիրը։ Միլովանովիչը երկար ճառով ընդգծեց նոր պայմանագրի օգուտները։ (Հ. Գ.)

Պեկին, 19 Նոյեմբերի

Չինացիների յարուցած դժուարութիւնների պատճառով ամերիկական փոխառութիւնը չը հրատարակվեց։ (Հ. Գ.)

Պարիզից հեռագրում են, որ երդուեալ դատաւորների դատարանը Ռուան քաղաքում մահվան պատժի դատապարտեց Հավր քաղաքի ածուխի բեռնակիրների դաշնակցութեան քարտուղարին նրա համար, որ դաշնակցութիւնը, այդ քարտուղարի առաջարկութեամբ, մահվան դատավճիռ սահմանեց մի շտրէյկբրէխերի։ Երեք բանւորներին, որոնք յանձն առան դատավճիռը ի կատար ածել, դատարանը դատապարտեց տաժանակիր աշխատանքների։ Երդուեալները այն կարծիքի են, որ սպանութեան դրդիչը պէտք է աւելի ծանր պատիժ կրէ, քան ֆիզիքական մարդասպանները։ Ռուանի դատարանի այդ մահավճիռը բանւորները վերագրում են այն ատելութեան, որ երդուեալները տածում են դէպի բանւորական դասակարգը և համարում են պատերազմի յայտարարութիւն բուրժուազիայի կողմից։ («Рѣчь»)

Պարիզ.—Աշխատանքի կոնֆեդերացիայի միտինգում վճռվեց լայն ագիտացիա սկսել ամբողջ Ֆրանսիայում բանւորների սինդիկատի անդամ Դիւրանի մահվան դէմ։ Եթէ մահապատիժը գործադրվի, վճռված է ամբողջ Ֆրանսիայում սկսել ընդհանուր գործադուլ։ («Б.»)

Պրոֆէսոր Էրլիխի «606» դեղը, ինչպէս հեռագրում են Բերլինից, դեկտեմբերի սկզբից կը սկսի ամեն տեղ վաճառվել «Սալվարսան» անունով։

Ռուսաստանը պատրաստվում է ճորտատիրութեան վերացման րէֆօրմի յիշատակի 50-ամեակի համար, որ լրանում է 1911 թւի փետր. 19-ին։ Մոսկվայի տեխնիքական ընկերութիւնն արդէն ձեռնարկել է մի խոշոր աշխատութեան հրատարակութեան։ Աշխատութիւնը լինելու է հաւաքական ույժերի արտադրութիւն և նպատակն է ծանօթացնել ընթերցողներին ռուս գիւղացիների պատմական վիճակի հետ։ Գործին մասնակցելու հրաւիրված են բոլոր գիտնական ույժերը, որոնք պարապել են ռուս գիւղացիների պատմութեամբ։ Գիրքը բաղկացած է լինելու 6 հատորից (յայտնի Դ. Ի. Սըտինի հրատարակութիւն) և եթէ դատելու լինենք ա. հատորից, լինելու է շատ փառահեղ։ Ընդհանուր խմբագրութիւնը յանձնված է Մելգունովին և մեր հայրենակից շնորհալի պատմաբան Ալեքս. Ջիվիլեղեանին։ Մենք դեռ առիթ կունենանք աւելի մանրամասն խօսելու այս աշխատութեան մասին։

Ֆինլանդիայում մտադրութիւն կայ մտցնելու պետական գրաքննչական ատեաններ։ Համապատասխան օրինագիծը արդէն մշակված է և որոշվել է հարկաւոր ցենզորների թիւը։ Ամբողջ երկրի համար նշանակվելու են 12 գրաքննիչներ, իսկ ծախս կը պահանջվի 108,000 ֆինլանդական մարկ տարէնը (մարկը հաւասար է ֆրանսիական ֆրանկի, 38 կոպ.)։ Հետաքրքրական է որ այս փոքրիկ երկրում, իր $2^1/_2$ միլիոն բնակչութեամբ, հրատարակվում են 130 օրաթերթ, 61 ընդհանուր բովանդակութեամբ, և 74 մասնագիտական հանդէսներ՝ շաբաթաթերթեր, ամսագրեր, մինչդեռ Կովկասը իր մօտ 11 միլիոն բնակչութեամբ ներկայումս ունի (բոլոր լեզուներով) մօտ 85 պարբերական հրատարակութիւններ՝ օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր՝ թէ ընդհանուր, թէ մասնագիտական բովանդակութեամբ։

Պետերբուրգ.—Առաջադիմական լրագիրները յարձակվում են Լէվ Լվովիչի վրա, որ այնպէս ծանր մեղադրանք է բարդում Չերտկովի հասցէին, իբր նա եղաւ Տոլստոյի մահվան պատճառը։ «Рѣчь»-ը ի միջի այլոց ասում է. «Լէվ Լվովիչը ապացուցեց, որ դժուար է Լէվ Նիկոլայէվիչի որդին լինել...»։ Մինչդեռ աջակողմեան «Земщина»-ն, «Свѣтъ»-ը պահանջում են Չերտկովին արտաքսել Ռուսաստանից։ («Б.»)

Մոսկվա.—Քաղաքային դուման որոշեց միջնորդել՝ բանալ համառուսական հանգանակութիւն Լ. Ն. Տոլստոյի մահարձանի համար։ Դուման իր կողմից այդ նպատակին յատկացրեց 10,000 ռուբլի։

Տուլա.—Իր կտակում Լ. Տոլստոյը խնդրում է Ալէքսանդրա Լվովնային դեռ լոյս չը տեսած գրուածքների հասոյթով յետ գնել Եասնայա-Պոլեանան յօգուտ գիւղացիների, իսկ յետոյ հրաժարվել հեղինակի իրաւունքից։ Միևնոյն բանի մասին նա խնդրում է Սօֆիա Անդրէեվնային։ («Б.»)

Կրասնովոդսկ.—Կրասնովոդսկ-Ղզըլ-Աղաջ գծի վրա սոսկալի ուրագան է։ Հաղորդակցութիւն չը կայ։ Գծի վրա բոլոր ջրերը սառել են. սառել են նմանապէս բոլոր շոգեմեքենաները։ («Б.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 19 Նոյեմբերի

Սենատ։ Շարունակվում է մինիստրական ծրագրի քննադատութիւնը։ Հիլմի փաշան մատնանշելով՝ որ արտասահմանում համակրութիւնը առ Թիւրքիան թուլացել է, ցանկութիւն է յայտնում, որպէսզի սահմանադրութեան առաջին դարում եղած համակրութիւնները ուժեղանան և ոչ թէ թուլանան։

Սենատոր Նորատունկեանը մատնանշում է՝ թէ մինիստրութեան ծրագիրը զուրկ է բազիսից, անխնամ է և պատահական։ Հռետորը ընդգծում է, որ չէ գործադրվել նաւաշինութեան ծրագիրը, պատահմամբ գընվել են սակաւ պիտանի նաւեր և չէ գործադրվել երկաթուղիներ կառուցանելու ծրագիրը։

Սենատն անհետևանք թողեց մեծ վէզիրի նկատողութիւնները և առաջին ընթերցումից և եթ ընդունեց մասնաժողովի խմբագրած ուղերձը։ Պալատին ներկայացվեց գահական ճառին պատասխան ուղերձի բնագիրը։ Մասնաժողովը առաջարկում է ժողովրդի անունից հաստատ մտադրութիւն յայտնել՝ պաշտպանել բոլոր ույժերով Թիւրքիայի օրինական գերիշխան իրաւունքները և, շարունակելով խաղաղ քաղաքականութիւն, օգտվել այն արտօնութիւններից, որ միջազգային իրաւունքով տրված են մեծ պետութիւններին։

Պատասխան-ճառի նախագիծը շնորհակալութիւն է յայտնում միապետին նրա հոգատարութեան համար և ապա մատնանշում է, որ պալատը մտադիր է գործադրել իր իրաւունքները գործադիր իշխանութեան վրա հսկելու իմաստով, միանում է միապետի այն կարծիքին՝ թէ անհրաժեշտ է համերաշխութիւն և փոխադարձ սէր պետութեան ժողովուրդների միջև, բաժանում է միապետի ուրախութիւնը զօրքի առաջադիմութեան առիթով և յոյս ունի, որ միատեսակ աջողութիւններ կարող է ձեռք բերել նաւատորմը։ Յիշելով այնուհետև Ալբանիայի և Խաուրանի դէպքերը և ուրախանալով խաղաղութիւնը վերականգնելուն, պալատը սպասում է, որ կառավարութիւնը կը ձեռնարկէ արմատական բարենորոգումների, աւելի իրական, քան խաղաղեցնելու միջոցները, նոր ապըստամբ շարժումների առաջն առնելու համար։ Շեշտելով դեֆիցիտի անխուսափելիութիւնը, պալատը հրաւիրում է կառավարութեան՝ ըստ հնարաւորութեան շուտով ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ երկրի բնական հարստութիւնները շահագործելու համար։

Դրուզները հերիկում, թւով 10,000 մարդ, 3-օրեայ կռւից յետոյ մեծ կորուստներով քաշվեցին իրանց նոր դիրքերը։

Ալբանացիների և զօրքերի ընդհարումները Չերնոգորիային սահմանակից տեղերում տեղի են ունենում ամեն օր։

Ալբանիայից զօրքեր հանելը դադարեցվեց։ (Հ. Գ.)

Վիէննա, 19 Նոյեմբերի

Չիարիկ եկան 200 թիւրք ասկերներ։ (Հ. Գ.)

Վիէննա.—Կ. Պոլսից հաղորդում են, որ երիտասարդ թիւրքերի բուռն ջանքերի շնորհիւ կարելի եղաւ մինիստրներին թողնել իրանց պաշտօններում։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Սպահան, 19 Նոյեմբերի

Թէհրանից և Նէջէֆից ստացված հրահանգների համաձայն, տեղիս անջումանը գումարեց բողոքի միտինգ Պարսկաստանում գտնվող ռուսաց զօրքերի դէմ. միտինգը կրեց լիակատար պարտութիւն և ցրվեց ամբոխի աղաղակներով՝ ուղղված սահմանադրութեան դէմ։ (Հ. Գ.)

Թէհրան, 19 Նոյեմբերի

Պարսից կառավարութիւնը լիակատար բաւարարութիւն տուեց Ղօչանի միջադէպի վերաբերութեամբ։ Արտաքին գործերի մինիստրը եկաւ ռուսաց դեսպանի մօտ իր համազգեստով և պաշտօնապէս ներողութիւն խնդրեց շահի կառավարութեան կողմից Ղօչանի ռուս դրօշակը վիրաւորելու համար։ Միաժամանակ մինիստրը դեսպանին մի նոտա յանձնեց, որի մէջ ասված է՝ թէ Ղօչանի ոստիկանութեան պետը արձակված է պաշտօնից, իսկ տեղական իշխանութիւններին պատուիրագրված է ամեն կերպ աջակցել ռուսաց հիւպատոսական գործակալին։ Մինիստրը յանձնեց նաև այն գումարի ընկալագիրը, որ տրվելու է վնասվածներին։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 19 Նոյեմբերի

Սալմաստի մօտերը քիւրդերը կողոպտել են մի շարք գիւղեր։ Սալմաստ-Թաւրիզ ճանապարհի վրա սպանվել են տասնեակ ճանապարհորդներ։ Հաղորդակցութիւնը Թաւրիզի հետ խզված է։ Ցաւալի տեղեկութիւններ են ստացվում Խոյից։ Շէյխ Տախան, որ իրան տէր է համարում քիւրդերից գրաւված շրջանների, եկել է Կալագէվա հարիւր ձիաւորներով։ Պատճառն անյայտ է։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՈՐՈՇՈՒՄՆ

1) Արգելվում է մայթերի վրա, արգելք լինելով հասարակութեան ազատ երթևեկման համար, կանգ առնել խմբերով, նաև անցնել ձեռք ձեռքի տուած։

2) Արգելվում է հրելով կամ խօսքերով վիրաւորել անցորդներին, կամ զանազան նշաններով, ձիւնակոյտեր, ծաղիկներ և ուրիշ առարկաներ նետելով, նաև ուրիշ միջոցներով։

3) Արգելվում է փողոցներում և հրապարակներում արշաւել ոտնասահնակներով (КОНЬКИ) և ամեն տեսակ խաղեր։

4) Արգելվում է փողոցներում երգել և նուագել գործիքների վրա։

5) Արգելվում է ապրանք ցրողներին, սայլապաններին, կանաչի ծախողներին, հին շորեր ծախողներին և այլն գոռալ փողոցներում։

6) Արգելվում է ծաղիկներ, լրագիրներ ծախողներին հետևել անցորդներին՝ առաջարկելով իրանց ապրանքները։

7) Արգելվում է սառը զէնք գործ ածել նրանց, որոնք իրաւունք չունեն, նաև մըտրակներ, ձողիկներ և այլն։

8) Արգելվում է գլխարկների վրա երկար սուր ասեղ ունեցող կանանց նստել էլեքտրաքարշի վագոնները, նաև երևալ զուարճատեղիներում և հասարակութեան խռնված տեղերում։

9) Արգելվում է ծխել թատրոնների և զուարճատեղիների շինութիւնների մէջ այդ նպատակով յատկացված տեղերից դուրս։

10) Այս կանոնները խախտողները կենթարկվեն պատասխանատուութեան քրէական պատժ. 29-րդ յօդուածով։

11) Այս պարտադիր որոշումն իր ույժի մէջ է մտնում «Кавказъ»-ում հրատարակվելու օրից։

Ստորագրեց Թիֆլիսի նահանգապետ՝

Լօգինօ-Լօգինսկի

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ծանօթանալով բժ. Զարգարեանցի Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան մասին յայտնած կարծիքի հետ, յիշեցի Աւետարանի այն առակը ուր ասված է թէ՝ «Թագաւորը իր երեք ծառաներին որոշ գումար դրամներ բաժանեց իր բացակայութեան միջոցին շահեցնելու. առաջին երկուսը մինչև տիրոջ վերադարձը ստացած գումարները տասնապատկած և հնգապատկած վերադարձրին տիրոջը, արժանանալով նրա գոհունակութեան, բարձր պատւի և իշխանութեան, իսկ երրորդը թագցնելով ստացած, գումարը վերադարձրեց նոյնութեամբ, ասելով «Տէր ահա մնասն քո զոր ունէի ծրարեալ ի վարշամակի, երկնչէի իքէն, զի այր ստամբակ ես, բառնաս զոր ոչ եդեր և հնձես զոր ոչ սերմանեցեր...» (Ղուկ. գլ. ԺԹ.)։

Որքան ինձ յայտնի է հասարակութիւնը, գուցէ ոչ բացառութեամբ, գոհ չէ ընկերութեան գործունէութիւնից, կամ աւելի ճիշտ, անգործունէութիւնից, և որ նա ներկայումս, իսկապէս, գտնվում է վերոգրեալ առակի երրորդ ծառայի դերում, դա անկասկած է։ Ուստի ընկերութեան վարչութեան յարգելի նախագահի այն առարկութիւնները թէ՝ «մեր ինքնուրոյն գրականութիւնը աղքատ է, իսկ թարգմանականը մանաւանդ կլասիկ և գիտական գրուածները իսպառ բացակայում է և այլն» ոչնչով չէ արդարացնում ընկերութեան անգործունէութիւնը. չէ՞ որ Թիֆլիսի նախկին Հայոց Հրատարակչական Ընկերութեան ժամանակն էլ ոչ միայն հայոց ինքնուրոյն և թարգմանական գրականութիւնն էր աղքատ, այլ և հայ գրականութեան հետևողների, հայերէն գրողների թիւը անհամեմատ աւելի սահմանափակ էր քան այժմս, այնուամենայնիւ այն ժամանակվայ ընկերութեան վարչութիւնը մի կողմ թողնելով գրականութեան մօնօպօլը՝ ասպարէզ տուեց գրականութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ այն տեսակ սկսնակ գրողների, որոնք մինչև այդ՝ բոլորովին անյայտ էին։ Եւ ի պատիւ նախկին ընկերութեան վարիչների, պէտք է խոստովանած, որ նրանց հրատարակած բազմաթիւ գիտական, գեղարուեստական, կենսագրական և բանասիրական գրքերը մինչև օրս էլ հայ գրականութեան լաւագոյն մասն են կազմում...։

Հարց է առաջ գալիս, ինչո՞ւ նախկին ընկերութեան վարիչները կարողանում էին ոչնչից գրականութիւն ստեղծել, իսկ այժմս աւելի նպաստաւոր պայմաններում ստիպված են անգործութեան դատապարտվել և բաւականանալ միայն հասարակութեան կոչ անելով, որ նա իր նոր անդամավճարներով հարստացնի ընկերութեան գանձարանը և միջոց տայ ներկայ վարչութեան 2000 ռ. ռոճիկով Իլիականի կամ Ռուսթավելիի «Ընձենաւորի» թարգմանութիւնն անելու...

Պատասխանը ի հարկէ շատ պարզ է. որովհետև այն ժամանակվայ ընկերութեան վարիչները տոգորված էին հասարակութեանը ծառայելու, նրա համար գրականութիւն ստեղծելու տենչով, իսկ սկսնակ գրողների ներկայացրած հէնց առաջին գրուածների մէջ համաշխարհային կատարելագործված հանճարներ որոնելով, բնական է, որ այդ միջոցով մեր գրականութիւնը միշտ էլ աղքատ կը մնայ...

Ոչ, պարոններ, եթէ ընդունում էք որ ընկերութիւնը մի հասարակական հաստատութիւն է, և հասարակութեան պարտականութիւնն է նպաստել նրա զարգացմանը, մի կողմ թողէք խնամիական և կուսակցական վերաբերմունքը և գործին վերաբերվէք բարեխղճօրէն. իսկ բարեխղճութիւնը պահանջում է ոչ թէ կոնսիկ հազարներ վճարել ապագայ թարգմանութեան համար, այլ իրօք հայ աղքատիկ գրականութեան մասին հոգ տանել, խրախուսելով և հրատարակելով սկսնակների լաւագոյն աշխատութիւնները... Յիշեցէք, պարոններ, որ ադամանդն անգամ իր նախնական շրջանում ոչնչով չէ զանազանվում հասարակ քարից. հմուտ վարպետի աչքն է նրան ընտրող և արուեստագէտի ձեռքն է նրան յղկող...

Դրանով դուք աւելի մեծ ծառայութիւն մատուցած կը լինէք հայ գրականութեանը։

Խ. Տ. Ց.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լագոդեխ, 16 Նոյեմբերի

Նորերս հաղորդել էինք, որ Լագոդեխի ծխատէր Բագրատ ք. Սուքիասեանը նորից տեղափոխվեց Թէլաւից Լագոդեխ։ Այդ քահանայի տեղափոխութիւնը կրում է զաւեշտական բնաւորութիւն։ Ինչպէս յայտնի է տեղափոխութեան համար հարկաւոր են լուրջ պատճառներ։ Լագոդեխի օդը խոնաւ է և նպաստաւոր րեվմատիզմի։ Քահանան վերցրել էր բժշկական վկայական, որի մէջ ասված էր, որ Լագոդեխի օդը վատ է ազդում նրա և կնոջ վրա։

Երբ գործակալ տէր-Եղիշէն անցեալ տարի գումարեց լագոդեխցիներին քահանայի տեղափոխութեան պատճառով, նա կարդաց

ՖԷԼԻԷՏՕՆ

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Ժամը եօթն էր։ Նախկին ֆէլիէտօնումս*) յիշած Հայկական Կուլտուրական Ընկերութեան անդամները՝ ողջ կազմով ժողոված, անհամբեր սպասում էին վարչութեան այն անդամի զեկուցմանը, որը խոստացել էր ցոյց տալ՝ թէ ինչ միջոցով կարելի էր ազատել թէ ընկերութիւնը և թէ մեր հասարակական գործերը դրամական ճգնաժամից։

Երբ բոլորը նստեցին սեղանի շուրջը, զեկուցանողը բարձրացաւ իր տեղից և, դառնալով ներկայ եղողներին, ասաց հետևեալը.

— Պարոնայք, վարչութեան անդամներ...

Բոլորը դարձել էին լսողութիւն։

— Առանց երկար ու բարակ առաջաբանների, ես անցնում եմ իմ զեկուցմանը։

— Մենք, պարոններ, չը գիտեմ ինչու, մի շատ յիմար սովորութիւն ենք արել. տօնել յոբելեաններ խեղճ, աղքատ, ընտանիքով ու հազար ու մի հոգսերով ծանրաբեռնված վիպասանների, բանաստեղծների, դերասան-դերասանուհիների, վարժապետների և դրանցից աւելի խեղճ՝ հայ թատրոնի, հայ դպրոցի և այլն և այլն։ Դա, պարոններ, իմ կարծիքով, սխալ է, անմիտ, նոյնիսկ անպատուաբեր, իսկ որ գըլխաւորն է, անարդիւնաբեր...

— Թողէք այդ խնդրեմ,—ընդհատեց նրան վարչութեան նախագահը, և դիմեցէք ուղղակի ձեր առաջարկին։

— Այս րօպէիս։ Իմ կարծիքով, պարոններ, դրանց՝ այդ գրողների յոբելեանները չէ, որ պէտք է տօնենք մենք, այլ մեր բոլոր հարուստների՝ նաւթարդիւնաբերողների, գործարանատէրերի, վաճառականների, կապալառուների, եպիսկոպոսների, ունևոր բժիշկների, իրաւաբանների յոբելեանները։

Ահա դրանք են, պարոններ, որ կարող են մեզ համար, և ընդհանրապէս մեր նման ընկերութիւնների համար դառնալ մի-մի բարերարներ, եթէ միայն մենք վերցնենք մեզ վրա... դրանց յոբելեանները տօնելու հոգսը։ Ի՞նչ է, միթէ կարծում էք, որ եթէ օրինակ մեր հասարակական հրճմարկութիւնները տօնէին դիցուք մի հարուստ Թումանեանի, Արղութեանի, Մարկոսեանի, Ամերիկեանի, Համբալեանի, Աբրինեանի, Թումուղչեանի և այլն և այլն դրանց նմանների յոբելեանները, դրանք, ի յիշատակ իրանց այդ մեծ տօնի, չէին նուիրաբերի մեր ընկերութեանը կամ այլ մեր նման ընկերութիւններին մեծ գումարներ, այնքան մեծ, որ կապահովվէին դրանք մի անգամ ընդ միշտ։

Բոլոր ներկայ եղողները ժպտացին և իրար երես նայեցին։

— Այո, պարոններ. թողնենք մի անգամ ընդ միշտ այդ գրող-մրողներին և ձեռքներս մեկնենք մեր հարուստներին՝ մեկնենք ոչ թէ 10—15—20—50 ռուբլի մուրալու սրա կամ նրա օգտին, այլ միանգամից ստանալու նրանից այն, որը տալիս են մեզ հարիւր անգամ մուրալով պուտ-պուտ, կաթիլ-կաթիլ։ Իմացէք, պարոններ, որ այդ սիստեմը և հնացած է և՛ անգործնական և՛ անպատուել։

— Ի՞նչ, կը հրամայէք դուք, որ ուղերձներ, ոտանաւորներ կարդանք դրանց համար,—հարցրեց վարչութեան անդամներից մէկը։

— Այո, պարոններ, ինչու չէ. չէ՞ որ մենք, ինչպէս ասացի, այդ տեսակ ուղերձներ, աղաչանքներ նրանց այդ հարուստների առաջ անում և ասում ենք ամեն մի յոբելեանից առաջ, երբ որևէ գումար ենք ուզում նրանցից՝ յօգուտ մի գրողի, դերասանի, վարժապետի կամ հաստատութեան. չէ՞ որ մենք հարիւր անգամ մեր մէջքերը կռացնում ենք նրանց առաջ, ժպտում, հալվում, մաշվում և տաս անգամ նրանց ձեռքները սեղմում ենք՝ ստանալով դրա համար ընդամենը մի քանի տասնեակ ռուբլիներ. ինչու այդ բանը չանենք միանգամից— նրանց յոբելեանի ժամանակ, անենք և պրծնենք։

— Լաւ. բայց ի՞նչ ասենք նրանց,—ինչպէս կազմենք այդ ուղերձները,—հետաքրքրվեց վարչութեան մի անդամը։

— Օ, շատ հեշտ. ես դրա մասին էլ եմ մտածել և արդէն կազմած ունեմ մի քանի հատ այդօրինակ ուղերձներ։

— Ապա կարդացէք տեսնենք,—ասացին բոլորը միասին։

— Ահա այս րօպէիս,—և, այս ասելով, նա ծոցից հանեց մի շարք կապոյտ թղթեր։

— Օրինակի համար, պարոններ, երևակայեցէք դուք, որ մենք տօնում ենք մի նաւթարդիւնաբերողի յոբելեան, և ահա նրան կարելի է կարդալ հետևեալ ուղերձը.

«Թանկագին յոբելեար. դուք, որ հայկական հեռաւոր գիւղերից մէկի անգրագէտ զաւակն էք և սրանից ընդամենը մի երեսուն-քառասուն տարի առաջ ամենահասարակ ֆահլա էիք, դուք, շնորհիւ բաղդի, հանգամանքների, ձեր ճկուն խելքի և կասկածելի գործերի, այսօր հասել էք մի այնպիսի դիրքի, որ ձեր առաջ խոնարհվում է հայ գրողն ու վիպասանը, բժիշկն ու ինժեները, բանաստեղծն ու հրապարակախօսը. դուք, մեծարգոյ յոբելեար, 35 երկար ու ձիգ տարիների ընթացքում սրանից-նրանից կոպէկներ կտրելով, կեղեքելով, հարիւրաւորներին հարստահարելով, այսօր, փառք հայոց ազգին, դարձել էք մեծ կարողութեան տէր. և ահա հայ ազգը, գնահատելով ձեր մէջ իր հարազատ, ընդունակ, խելացի զաւակին, այսօր իր սրբազան պարտքն է համարում պսակել ձեր քրտնաթոր ճակատը դափնիներով... «Կեցցէք դուք, երկար ու երկար տարիներ»։

— Եւ ի՞նչ էք կարծում, միթէ հայ հարուստը կը դիմանայ այս տեսակ գնահատութեանը և մեր ընկերութեանը չի նուիրի 10, 20, 30 հազար ռուբլի։

— Կամ ահա մի ուրիշը։ Դիցուք կատարում ենք մի մանուֆակտուրիստի յոբելեան, նրա ուղերձի մէջ գրված կը լինի հետևեալը.

«Ազնուազարմ յոբելեար! Ահա քառասուն տարին լրանում է այն օրից, երբ դուք, դուրս գալով ձեր նախկին խօզէինի մօտ «դուքնի աշակերտ» լինելու պատից, մտաք առևտրա-արդիւնագործական ասպարէզ։ Սկսելով ձեր գործը փոքրից, դուք փոքր առ փոքր վարկ ձեռք բերեցիք խոշոր ֆաբրիկանտների առաջ, լցրեցիք ձեր խանութը հազար տեսակ ապրանքներով և մի գեղեցիկ օր խելացիութիւն ունեցաք կոտր ընկնելու՝ նախապէս խանութը ձեր կնոջ, ազգականի կամ գործակատարի անունով անելով. ճիշդ է, գործարանատէրը տասնեակ հազարներ կորցրեց և հայ անունը անիծելով անիծեց, բայց դուք թքեցիք նրա վրա և ձեր գործը առաջ տարաք այնպէս, որ մի քանի տարուց յետոյ նորից ցուցանակի վրա ձեր անունը գրեցիք և դարձեալ նոյն փորձված եղանակով... կոտր ընկաք. և այսպէս մի անգամ։ Ահա այդպիսի խելացի և հեռանկար ճանապարհներով մեծ հարստութիւն դիզելով, դուք, մեծարգոյ յոբելեար, խոյս տուեցիք հասարակական այն բոլոր տեղերից, ուր հարկաւոր էին ձեր նպաստները. սակայն, մեծարգոյ յոբելեար, հայ ազգը, ինչպէս տեսնում էք, խոյս չէ տալիս ձեզանից. և նա այսօր գալիս է իր մեծարանքը յայտնելու ձեր ընդունակութեան, ճարպիկութեան և հնարագիտութեան առաջ և ընտրում է ձեզ ձեր այսօրվայ յոբելեանի առիթով իրան հովանաւորող՝ Կեցցէք դուք մեզ համար և ազգի համար»։

— Ահա ձեզ, պարոններ, և մի այլ ուղերձ՝ գրված մի հարուստ հոգևորականի— սրբազանի յոբելեանի առիթով.

«Սրբազան հայր! Թոյլ տուէք մեզ ձեր կենաց այս հանդիսաւոր րօպէին բացել ներկայ հասարակութեան առաջ ձեր անցեալի վարագոյրը ցոյց տալու համար՝

---

*) Տես «Մշակ» № 254. Սալ-Մանի ֆէլիէտօնը։ Ծ. Խ.

առաջնորդի հրամանն այս առիթով։ Առաջնորդը գրում էր. «Ի նկատի ունենալով, որ կլիմայական պատճառները վատ են ազդում տէր-Բագրատի և նրա ընտանիքի վրա, տեղափոխւում է նրան Թելաւ»։

Քահանան գնաց Թելաւ և փոշմանեց։ Նա գնաց մեծ յոյսերով. կամենում էր գործակալի պաշտօնը ստանալ, կամենում էր կրօնուսոյց լինել դպրոցներում, սակայն անիծած Թելաւի տէրտէրները չեն թողել, որ տէր-Բագրատի յոյսերն իրագործվեն։ Այս պատճառով նա նորից գերադասեց Լագօդաղը, որին նա անուանում էր «դժոխք, Գողգոթա». շատ դժգոհ էր լագօդաղցիներից և անիծում էր նրանց։ N. N.

ԴԱՒԱՌԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» ընթերցողները գիտեն, որ մեզանում կառուցվում է ծխական դպրոցի համար նոր շինութիւն, որի նախաձեռնութիւնը իր վրա էր վերցրել մեր եկեղեցիների նախկին բարեկարգիչ Խորէն սրբազան Մուրադբէգեան։ Գիտեն նաև, որ այդ շինութեան մի մասը տեղացի հարուստ պ. Հ. Խաչատրեան իր վրա է վերցրել իր ծախսով շինելու, իսկ միւս մասը պէտք է կառուցվի ժողովրդի օժանդակութեամբ։ Սակայն Մուրադբէգեան սրբազանը իր ժամանակին մի փոքր գումար հանգանակելով մեր հասարակութեան շրջանում և ընտրելով եկեղեցական մասնաժողով՝ ձեռնարկեց դպրոցի շինութեան կառուցմանը։ Եւ ահա դեռ դպրոցի շինութեան բարձրութիւնը երկու արշինի չը հասած՝ եկեղեցական մասնաժողովի դրամական միջոցները սպառվեցին և դպրոցի շինութեան գործը կանգ առաւ, մանաւանդ որ Խորէն Մուրադբէգեան տեղափոխվեց Երևան։ Այժմ տեղիս ժողովուրդը ոչինչ ջանք չէ անում դպրոցի շինութեան մասին, իսկ մասնաժողովը սիրտ չէ անում դիմել հանգանակութեան շարունակութեանը, որովհետև ժողովուրդը սառն տրամադրութիւն է ցոյց տալիս առհասարակ դէպի դպրոցի շինութեան գործը և ընդհանուր լքումն է տիրում հասարակութեան բոլոր խաւերում։

Այժմ դպրոցի շինութեան այն մասը, որ կառուցվում է Հ. Խաչատրեանի միջոցներով, ծածկելուն մօտ է, թէև վերջինիս կողմից բերանացի պայման էր առաջարկված, որ ժողովուրդը պարտաւոր է իր հետ համահաւասար կերպով կառուցանել դպրոցի միւս մասը, որը, սակայն, երեսի վրա է մնում և գուցէ դեռ երկար ժամանակ այդպէս մնայ, եթէ մի բարերար մարդ դուրս չը գայ իր լուման ձգելու մեր դպրոցի կառուցման գանձանակը, կամ թէ եթէ մի զօրեղ ձեռք կամ մի հեղինակաւոր անձնաւորութիւն գործի գլուխ չանցնի՝ իբր դպրոցական գործի նախանձախնդիր։

Բայց այնուամենայնիւ մեր կիսատ մնացած դպրոցի կառուցման մասին մի փոքրիկ յոյսի նշոյլ կայ, որը ուրախալի երևոյթ կը լինի մեր քաղաքի աղքատ հասարակութեան համար, որը իրաւ որ անզօր է իր սուղ միջոցներով գլուխ բերել դպրոցական այդ վիթխարի շինութիւնը, որ սկսված է առանց երկար մտածելու և մեր ժողովրդի գրպանի ոյժը չափելու... Այն է, որ մի քանի օր առաջ, երբ Երևանում ժողով է կայացել թեմական դպրոցի համար նոր շինութիւն կառուցանելու առիթով հանգանակութիւն սկսելու, մեր քաղաքացի Ա. Աֆրիկեան յայտնել է, որ ինքը իր կողմից իր մասնակցութիւնը կը հասցնի Նոր-Բայազէտի դպրոցի շինութեան գործին։

Նոր-Բայազէտի պէս մի աղքատ քաղաքի հասարակական-ազգային և կրթական հիմնարկութիւն գլուխ բերելը մի առանձին երևոյթ կը լինի բոլորի աչքում. ուստի եթէ մեր հայրենակից Ա. Աֆրիկեան մտադիր է մեծ բարիք անել իր հայրենի քաղաքին, թող շտապէ իր նախաձեռնութիւնը ցոյց տալ մեր չքաւոր ժողովրդին, որի մանուկները փողոցում թափառելուց դադարելով կը պատսպարվեն դպրոցի շինութեան մէջ, իսկ հազարաւոր ծնողներ կաղօթեն նրա կեանքի արևշատութեան համար։

Միւս կողմից ես հարկ եմ համարում մատնացոյց անել «Մշակի» № 211-ի առաջնորդողը «Մի մոռացէք գաւառները» վերնագրի տակ, որտեղ պ. Հ. Առաքելեան՝ նկատելով որ բոլոր մեծահարուստ մարդիկ, նուիրատուներ, կտակատարներ բացառապէս իրանց լուման նուիրում են մեծ քաղաքներին՝ հրաւիրում է չը մոռանալ նաև գաւառները, քանի որ գաւառի կարիքները աւելի մեծ են և ժողովրդական հիմնարկութիւնները աւելի կարօտ օժանդակութեան և խնամքի։ Ուստի միանգամայն համաձայն լինելով յօդուածագրի առաջարկութեան, պարտք եմ համարում նորից հրաւիրել մեր հայ կրեսոսների ուշադրութիւնը գաւառների բարեգործութեան վրա, որպէսզի իրանց հարիւր հազարների նուիրաբերութիւններից մի փոքր մասն էլ զոհեն գաւառական ժողովրդական կրթական գործի համար։

Որքան նպատակայարմար կը լինէր, օրինակ, երբ մի 5—10,000 ր. նուիրաբերվէր մեր քաղաքի կիսատ մնացած դպրոցի շինութիւնը աւարտելու համար։ Դա անփոխարինելի մի բարեգործութիւն կը լինէր մի որևէ նուիրատուի կողմից՝ դէպի գաւառի աղքատ ազգաբնակութիւնը, որի հարիւրաւոր երեխաները թափառելով փողոցներում, տեղ չեն գտնում ուսանելու, քանի որ զուրկ են դպրոցական մի կանոնաւոր և բաւականացուցիչ շէնքից։

Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ, 5 նոյեմբ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հայոց լեզուի ուղղագրութեան հարցը սկսում է իր բնական, նորմալ շաւղի մէջ մտնել։ Մեր ազգային կրթական հաստատութիւններից մի քանիսը արդէն որոշել են ընդունել ու-ական ուղղագրութիւնը, այն է հայկական հին աւանդականը։ Այդ որոշումը կայացրել են Ներսիսեան դպրոցի և Յովնանեան դպրոցի վարչութիւնները, իսկ նորերս էլ նոյն որոշումը կայացրել է Թիֆլիսի Հայոց Հրատարակչ. Ընկերութիւնը։ Այդ առիթով մեզ հաղորդում են, որ մի խումբ անձինք պատրաստւում են դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրելով կարգադրել, որ հայոց բոլոր դպրոցներում ընդունվեն գործադրութեան համար միայն այն դասագրքերը, որոնք տպված են հին ուղղագրութեամբ, և վտարվեն այն դասագրքերը, որոնք գրված են ւ-ի ուղղագրութեամբ, կամ վ-ի՝ եթէ կան այդպիսիները։

◆ Թիֆլիսում արդէն սկսել են սառնամանիքները։ Այս տարվայ վաղահաս խիստ ձմեռը անսովոր բան է քաղաքիս համար։

◆ Այս տարի Ռուսաստանում անասելի ցրտեր են և ձիւնախառն ուժեղ փոթորիկներ։ Սիբիրում օրինակ սառնամանիքը հասնում է մօտ 40 աստիճանի։ Հիւսիսային Կովկասում այնպէս ցուրտ է, որ երկաթուղային ծառայողները չեն կարողանում աշխատանքի դուրս գալ։

◆ Այսօր Մողնու ծխականների ժողով է նշանակված Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում։ Այսօրվայ տարեկան ծխական ժողովը, իբրև շարունակութիւն նախորդ չը կայացած ժողովի, համարվելու է օրինական անկախ ներկայ եղող անդամների թւից։ Ի նկատի առնելով ժողովի օրակարգի խնդիրների կարևորութիւնը, ցանկալի է որ ծխականները մեծ թւով ներկայ լինեն ժողովին։

◆ Թիֆլիսի նահանգում եղջիւրաւոր անասունների ժանտախտը վերջացած պէտք է համարել։ Եթէ լինում են դէպքեր, նրանք հատ-հատ են։

◆ Դատարանին է յանձնված Շարուր-Դարալագեազի նախկին գաւառապետ Զէյգինձէն մի քանի յանցանքների համար։

◆ Նոյեմբերի 18-ին Բօրսայի դահլիճում կայացաւ «Alliance français»-ի երկու ուրախ վօդվիլները։ Հասարակութիւն շատ կար, որը շարունակ ծիծաղում էր։ Բացի ներկայացումից եղաւ և երաժշտական բաժին։ Երեկոյթի կարգադրիչն էր ընկերութեան նախագահի օգնական Ա. Սարուխանեան։ Հասարակութիւնը ցրվեց գոհ։

◆ Այս օրերս Թիֆլիսի կայարանում ստացվեց հանգուցեալ վրաց բանաստեղծ իշխան Իլիա Ճավճավաձէի մահարձանը։ Այս արձանը կը պահվի Թիֆլիսի վրաց ազնուականութեան շինութեան մէջ մինչև գարուն, երբ մտադրութիւն կայ կանգնեցնել նրան հանգուցեալ բանաստեղծի գերեզմանի վրա։

◆ Հանգուցեալ Շիոյեանի քաղաքին կտակած գումարները տարին տալիս են մօտ 13,000 րուբլի տոկոս, որպիսի գումարով, համաձայն կտակողի կամքի, բացվելու է Թիֆլիսում արհեստաւորաց դպրոց կամ տրվելու է թօշակ արտասահմանում արհեստագիտական առարկաներ ուսանելու պատրաստ աշակերտներին։ Մինչդեռ, յատուկ խառն մասնաժողովը խորհուրդ տուեց քաղաքին բանալ այնպիսի տիպի արհեստաւորաց դպրոց, որի պահպանութիւնը քաղաքին կը նստի 24,000 րուբլի տարին։ Դումայական դպրոցական մասնաժողովը, չը համաձայնելով խառն մասնաժողովի կարծիքի հետ, որոշեց առաջարկել դումային բանալ նկարչական-արհեստագիտական ուսումնարան քանդակագործական բաժանմունքով, ըստ որում այդ դպրոցը պէտք է գտնվի այժմեան արհեստաւորաց դպրոցի շէնքի մէջ, իսկ երկու դպրոցների վարչական իշխանութիւնը, տնտեսութեան համար, լինելու է ընդհանուր։

◆ Այսօր ցերեկով Ժողովրդական Տանը Մ. Զաքարը դասախօսութիւն կը կարդայ քաղաքների սօցիալական խնդիրների մասին։

◆ Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը տ. Ե. Է-ին, որը ի յիշատակ իր սիրելոյ՝ Ս. Ե.-ի նուիրեց Ընկերութեանը 50 ր.։

◆ Լուրջ կերպով հիւանդացել է Պետական Դումայի նախագահ Ա. Գուչկովը։

◆ Կովկասում ուղղափառութիւն տարածող ընկերութիւնը իր յօբելեանի առիթով նուէր ստացաւ Կովկասի Փոխարքայի և կոմսուհու կողմից 5,000 րուբլի, Կազանի արքեպիսկոպոս Վլադիմիրից՝ 500 ր. և Խարկովի արքեպ. Արսէնիից՝ 100 ր.։

◆ Զայնաւորների մի խումբ եռանդով առաջ է տանում Թիֆլիսի քաղ. վարչութեան 4-րդ անդամի պաշտօնի համար Զաքարիէի թեկնածութիւնը։

◆ Ժող. լուս. մինիստր Կասսօն արդէն ձեռնարկել է համալսարանական կանոնադրութեան վերամշակմանը։

◆ Այս օրերս Թիֆլիսում կալանաւորվեց Գանովսկայա փողոցում ապրող տիկին Վ. Զիթախեանը, որ մեղադրվում է իր ամուսնու սպանութեանը մասնակցելու և քաղաքային վարչութեան գործավար Սահաթսազեանի կեանքի դէմ կատարված մահափորձին նպաստելու մէջ։

◆ Քաղաքային գնահատիչ խմբերը աւարտելով իրանց աշխատանքները 8-րդ քաղաքամասում, այժմ անցել են Հալաբարի անշարժ կալքերը վերագնահատելուն։

◆ Ստացանք «Նոր-Դպրոց» ամսագրի հոկտեմբերի համարը։

◆ Որոշված է հանգուցեալ իշխ. Ճավճավաձէի գոյքը փոխադրել վրաց ազնուականութեան գիմնազիայի շինութիւնը։

◆ Ֆինանսների մինիստրութիւնը յետաձգեց Գանձակի նահ. Հաջիքէնդ գիւղի բնակիչների 604 ր. 84 կ. պետական տուրքի և 781 ր. 16 կ. զէմստվային հողային տուրքի գանձումը երեք տարով, սկսած 1911 թւից։

◆ Նուխի հայոց ուսումնարանի աւագ ուսուցիչ Յ. Բաղալեանը խնդրում է մեզ տպել հետևեալը.—«Նախիջևանի գաւառի Նորս գիւղի հասարակութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը համագիւղացի Գաբրիէլ Սմբատեանին, որ նուիրել է մեր ուսումնարանին 127 հատ ընտիր գրքեր։ Ցանկանում ենք այդպիսիների թիւը աւել լինի, որոնք միշտ հոգ տանեն իրանց հայրենիքի համար»։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 4-ին, Ռոմանիում, Մոսկվա-Կովկասեան Ընկերութեան նաւթահորից սկսեց ֆոնտան խփել, որ օրական տալիս է մինչև 300 հազար փութ նաւթ։

◆ Ռօմանիում, Հաջինսկիի նաւթահանքում, որ այժմ կապալով վերցրած ունի Նօբէլը, № 435, սկսեց ֆոնտան խփել, որը սակայն շուտով դադարեց։

◆ Բագուի մի քանի հասարակական հաստատութիւններ ժողովարարութիւն են անում հանգուցեալ Տօլստոյի անուան ֆոնդ հիմնելու նպատակով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

Ս. ԹԱՌԱՅԵԱՆԻ «ՍՕԿՐԱՏԸ»

(Ֆելիետոնի փոխարէն)

Թառայեանի «Սօկրատը» հայ գրականութեան մէջ, անկասկած, պատուաւոր տեղ պիտի բռնի. գրուածքն իր ինքնուրոյնութեամբ շատ աչքի է և կարօտ է որոշ բարեփոխութիւնների։

Թողնելով գրուածքի զուտ գեղարուեստական կողմը, կուզէինք կանգ առնել փիլիսոփայական այն տեսակէտի վրա, որ ունեցել է Սօկրատը և որը, կարծում ենք, ոչ այնքան ճշտապահութեամբ դուրս է բերված Ս. Թառայեանի կողմից։

Թառայեանը, ոչ միայն «Սօկրատում», այլ իր բոլոր աշխատութիւնների մէջ ծանրութեան կենտրոնը գտնում է գաղափարի մէջ, իդէայի մէջ, զոհելով դրան որոշ չափով գեղարուեստականը. դա գուցէ նրա գրականական սկզբունքն է և հետևապէս, դրա վրա չենք ուզում կանգնել։ Բայց մի բան, որ ճիշտ է, այդ այն է, որ Սօկրատի համար իդէան հէնց ինքը գեղեցիկն է։ Սօկրատի իդէալը կատարելագործված մարդկութիւնն է, որ պիտի ղեկավարվի բարութեան և արդարութեան սկզբունքով (1, 2, 9, IV, 6, 12, Xenophon, les choses mémorables)։

Այս կէտը աւելի քան գեղեցիկ և ճշմարտօրէն դուրս է բերված Թառայեանի «Սօկրատում»։ Թառայեանի Սօկրատը գեղեցիկ կերպով ասում է. «Քանդակագործները անտաշ քարից գեղեցիկ մարդու նման արձաններ են պատրաստում. դուք աշխատեցէք մարդկանցից մարդիկ պատրաստել»... այդ մարդկանցից պատրաստված մարդիկ պիտի լինեն Աթէնքի փրկիչ հայրենասէր քաղաքացիները. սա երկրորդ կէտն է, որ ցոյց է տալիս Սօկրատի ճշմարիտ և գիտակցված հայրենասիրութիւնը (I. I, II, choses mémorables)։

Ճշմարտութեամբ դուրս է բերված և մի ուրիշ հիմնական կէտ, որ և կազմում է Սօկրատի փիլիսոփայութեան կմախքը—կայ, գոյութիւն ունի այսպէս կոչված հասարակական բարոյականութիւնը, հասարակական գաղափարը, հասարակական-մարդկային գաղափարը։

Թէպէտև սկէպտիկ, ինչպէս և սոփեստները, բայց նրա մտածելակերպը իր վերջնական եզրակացութիւններով բոլորովին տարբերվում էր սոփեստների մտածելակերպից։ Միտքը լինելով զգացմունքների արտապատկերների ձևակերպումը, անհատական է և ոչ ընդհանուր, հասարակական։ Ամեն մի միտք, ամեն մի գաղափար սխալ է, որովհետև նա հիմնված է անհատական զգացմունքների վրա. և որովհետև զգացմունքները անհատից անհատ տարբերվում են,—հետևապէս տարբերվում են և մտքերը, գաղափարները։ Եւ որովհետև չը կայ մի գաղափար, մի միտք, մի ճշմարտութիւն, որ ամենքի կողմից ընդունվի ինչպէս այդպիսին, հետևապէս և չը կայ աբսօլիւտ, ընդհանուր, մարդկային և հասարակական գաղափար. անհատն է, որ չափում է ամեն ինչ, և ոչ մարդը, հասարակական մարդը. այսպէս սոփեստները բացասում էին հասարակականը, հակադրելով անհատականը. մի սկզբունք, որ բացասում է հասարակութիւն, բարոյականութիւն, պետութիւն։

Սօկրատը, սկէպտիկ լինելով հանդերձ՝ հակադրում է սոփեստներին, որ առանձին անհատների մէջ կան ընդհանուր կէտեր, ընդհանուր գաղափարներ, ընդհանուր մտքեր, որոնք ի մի կապվելով տալիս են մարդու, հասարակական մարդու գաղափարը, հասարակական ընդհանուր խիղճը։

Սօկրատի փիլիսոփայութեան այս հիմնաքարը Թառայեանցին աջողվել է ճշգրիտ կերպով դուրս բերել, և նա կարմիր թելի նման անցնում է ամբողջ գրուածքի միջից։ Թառայեանի «ընկերականութիւնը» Սօկրատի աշակերտների վերաբերեալ ուզում է ցոյց տալ մեծ փիլիսոփայի այս հայեցակէտը. նրա ամբողջ խօսակցութիւնները, նրա ամբողջ վերաբերմունքը դէպի իր աշակերտները, նրա անսահման հնազանդութիւնը պետական-հասարակական կարգերի առաջ, պետութիւնը, ինչպէս այդպիսին ընդունելը, հասարակութեան բարօրութեան ձգտելը—այս բոլորը գալիս են պնդելու Սօկրատի այս հայեցակէտը։

Սակայն ճշտապահ չէ Թառայեանը երկու կէտի վերաբերեալ, և սրա վրա հրաւիրում ենք նրա ուշադրութիւնը։

Անհատականից հասարակականին անցնելով, անընդհատ աշխատելով որոշել ինչն է բարին և ինչն է արդարութիւնը, բնորոշելով և կանգնելով բարոյագիտութեան վրա, պատմական Սօկրատը չէր բացասում ստրկութեան սկզբունքը, գոնէ այդ մասին նա ոչինչ չէ ասել, աւելի ճիշդ՝ մենք չը գիտենք, ասե՞լ է թէ՞ չէ. պիտի ենթադրել աւելի շուտ այն, որ նա չէ ասել և չէր էլ կարող ասել, որովհետև ընդունում էր դասակարգերի գոյութիւնը։ Այո՛, նա ընդունում էր մարգասիրութիւն և կատարելագործված մարդկութիւն. բայց այս ձևակերպումների մէջ պարունակվո՞ւմ է արդեօք, ստրկութեան ինստիտուտի բացասումը. այդ մենք չը գիտենք յայտնապէս։

Երկրորդ սխալը, որը նոյնպէս պիտի մատնացոյց անել, այդ Սօկրատի մի աստուածութիւն ընդունելն է. Թառայեանի Սօկրատը բանաստեղծին պարզ ասում է. «Սուրբը միայն Աստուած է»։ Ինչքան մեզ յայտնի է, Սօկրատը ոչ մի տեղ այդքան պարզ, այնքան որոշ կերպով չէ ընդունել միակ աստուածութիւնը։ Մեզ հասած աղբիւրները, մինչև անգամ վկայում են, որ նա հաւատում էր «անբնականին», «բարձր էակներին», «ազգերի խնամատար հանճարներին»։ Այս բոլորին նա հաւատում էր, թէպէտև չէր հաւատում զանազան առասպելներին։ Այս կասկածանքների միջից նա պնդում էր «նախախնամութեան» համաշխարհայնութեան վրա, մի կէտ, որ զարգացրին և կատարելագործեցին ստոյիկները և քրիստոնէութիւնը։

Վերջացնում ենք մեր խօսքը, յայտնելով մեր խորին ուրախութիւնը Թառայեանցին, այս նոր աշխատանքի համար. այդ տեսակ գրուածքները անշուշտ կարող են հարստացնել մայրենի գրականութիւնը և կապել հասարակութիւնը գրականութեան հետ։

Ցանկանում ենք նրան կորով և աջողութիւն իր ապագայ գործերում։

Յովս. Տէր-Վարդանեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Tiefland)

Թիֆլիսում առաջին անգամ է տրվում «Տիֆլանդ» օպերան։

Նրա հեղինակը, երաժշտագէտ Դալբեր, ունի գրած մի մի քանի օպերաներ և բազմաթիւ երաժշտական մանր երկասիրութիւններ։

Ներկայ օպերան, բաղկացած երեք գործողութիւնից, հետաքրքրեց Թիֆլիսի թատերասէրներին։

Նա խոր և յարատև տպաւորութիւն թողնող օպերաներից չէ, բայց պարունակում է իր մէջ ինքնայատուկ երաժշտական ըմբռնումներ, մի քանի թարմ եղանակներ։ Առանձին տեղ է տրված խօսակցական և պատմական ձևին, շնորհիւ որի դիւրըմբռնելի է դառնում օպերայի այն կտորների բովանդակութիւնը, որտեղ դեր են խաղում արարուածներից դուրս հանգամանքներ։

Երաժշտութիւնը երկրորդ և երրորդ գործողութիւնների մէջ ունի ուժեղ, զգացված, ցնցող կտորներ, որոնք միացած գործող անձերի երգեցողութեան և խաղի հետ՝ գրաւում են հանդիսականի լարված ուշադրութիւնը։ Առաջին գործողութեան մէջ վատ չէ հովուական սրինգի նմանեցրած և հովուական տրամադրութեան համապատասխան երաժշտութիւնը, բայց աղքատ է բովանդակութեամբ այդ երաժշտութիւնը։

Գլխաւոր հերոսուհու դեր կատարող երգչուհի Վիկշեմսկայա, հովուի դեր կատարող Ֆօն-Բիգէն և կալուածատէրի դերակատար Տօմսկի գեղեցիկ էին իրանց կատարումներում, տալով զգացված և արտայայտիչ երգեցողութիւն, խելացի խաղ և շարժումներ։ Լաւ էր իր փոքրիկ դերում Գալեցկի (Ռօմազօ)։

Սիրող

—

Նուխի, 11 նոյեմբերի

Ամսիս 5-ին Թուրք թատերասէրների խումբը մասնակցութեամբ դերասան Մուսեանի և ռուս սիրողների յօգուտ ռուս-թուրքական դպրոցի տուեց մի ներկայացում։ Խաղացին «Վաթան» պատմական 4 գործ. դրաման, հեղ. Համդ Քէմալ բէգի։

10—15 տարի առաջ նուխեցի թուրքը գեղարուեստի մասին գաղափար անգամ չունէր. նա դեռ չէր ըմբռնել, որ գեղարուեստը հոգեկան սնունդ ստանալու մի ուսումնարան է։ Եւ հէնց այդ պատճառով էլ այդ ժամանակներում թուրքերէն ներկայացումը մի շատ հազւագիւտ երևոյթ էր. իսկ այժմ թուրքերը շատ քաջ ըմբռնել են գեղարուեստի բարձր յատկութիւնները և բարիքները։ Եւ համարեա ամեն ամիս ներկայացումներ է, որ տրվում են յօգուտ զանազան բարեգործական նպատակների։

Եչխեբէգ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը թոյլ տուեց խաղալու Կովկասի բեմերի վրա հայերէն, Չիրիկովի «Մարիա Իվանովնա» 4 գործ. պիէսը, թարգմ. Մ. Ստամբօլցեանի։

◆ Այսօր Զուբալովեան Ժողովրդական տանը Ռուսաց Երաժշտասիրաց Ընկերութիւնը կը ներկայացնէ «Ֆաուստ» օպերան։

◆ Զուբալովեան Ժողովրդական Տան բոլոր սեկցիաների ընդհանուր մասնաժողովի նախագահ ընտրվել է Բուկշտէյն, իսկ քարտուղար՝ Գ. Երիցեան։

◆ Վաղը Արտիստական թատրոնում հայ դերասանական խումբը իր հերթական ներկայացմանը կը խաղայ Գորդինի յայտնի «Միրրա Էֆրոս» պիէսը։

◆ Այսօր Տրուցիի յայտնի ցիրկը կը տայ երկու ներկայացում. ցերեկով երեխաներին մատչելի, իսկ երեկոյեան մեծերի համար։ Եկել են նոր արտիստներ։

◆ Այսօր Արքունական թատրոնում ցերեկով էժան գներով օպերային խումբը կը տայ «Ռուսլան և Լիւդմիլա» օպերան։ Վաղը նոյնպէս հանրամատչելի ներկայացում է երեկոյեան կը խաղացվի «Մեֆիստոֆէլը»։

◆ Ինչպէս լսում ենք, Ս. Թառայեանը պատրաստում է մի նոր պատմական թա-

---

թէ ով էք դուք։ Ինքներդ լինելով հասարակ մօնթ, դուք, թողած աշխարհիկ, անցաւոր կեանքը, ընտրեցիք հոգևորն ու Քրիստոսին. որպէս Ձեր Մեծ Ուսուցչի ճշմարիտ աշակերտ, դուք ստանձնեցիք թէ վանական կառավարութեան մէջ և թէ նրանից դուրս՝ ժողովրդի մէջ, պատասխանատու պաշտօններ. սկզբում որպէս փոքրաւոր, ապա աբեղայ, վարդապետ և վանահայր զանազան վանքերի, դուք զրկեցիք ձեզ աշխարհիկ վայելքներից և, կոպէկ կոպէկի վրա դնելով, դիզեցիք մի քանի հազար րուբլի. յետոյ դուք սրան և նրան շողոքորթելով դարձաք եպիսկոպոս, ստացաք թեմ և, որպէս թեմական առաջնորդ, ձեր բազմամեայ պաշտօնավարութեան ժամանակ 120 ողորմելի տիրացուներ քահանայ ձեռնադրեցիք, ստանալով այդ ապուշներից 50-ից մինչև 4—5 հարիւր րուբլի. այնուհետև զանազան աջահամբոյրները, հարուստ մեռելներն ու պսակները եկան աւելի ևս աւելացնելու ձեր եկամուտը. որով այսօր դուք, ի փառս Հայաստանեայց եկեղեցու և յուրախութիւն մանաւանդ ձեր ազգականների, ունէք մի քանի տասնեակ հազար րուբլի։ Սակայն ընկերութիւնս, իմանալով որ ձեր թանգագին մահից յետոյ, ազգից թալանած այդ գումարը շներոց-գէլերոց է լինելու, մտածեց ձեր ունեցածին տալ պատուաւոր գործադրութիւն. ուստի և համաձայն ընդհանուր ժողովի ցանկութեան որոշեց տօնել ձեր յօբելեանը, որպէսզի դրամով հնարաւորութիւն տայ ձեզ մի բարի գործ անելու»։

Եւ այն ինչ զեկուցագրողը մի առ մի կարդում էր զանազան ուղերձներ՝ գրված հայ հարուստ բժշկի, փաստաբանի, կապալառուի, բանկիրի և այլն մասին—ներկայ եղող վարչութեան անդամների երեսները փայլում էին ուրախութիւնից, այնքան որ, երբ նա աւարտեց, բոլորը գրկախառնեցին նրան, համբուրեցին և ապա, նստելով սեղանի շուրջը, սկսեցին կազմել հայ հարուստ յօբելեարների ցուցակը։

Այլ ևս չէին հարցնում՝ ոչ քսան և հինգ, ոչ երեսուն և ոչ էլ 50-ամեակ, այլ գրում ու գրում էին, հաւատացած լինելով, որ յիշեալ յօբելեարները հազիւ թէ դժգոհ մնային, եթէ տօնվէր նրանց 22-ամեակը, կամ քսանութ, երեսունվեց, 41-ամեակը։

Եւ, ինչ էք կարծում, այդօրինակ յօբելեարների թիւը 10 րօպէում անցաւ մի քանի հարիւրից...

Ընդունելով որ ամեն մի յօբելեար իր յօբելեանին կը տար առնուազը 5,000 րուբլի, ստացվեց այնպիսի պատկառելի մի գումար, որի տոկոսներով կարելի էր ոչ միայն ապահովել մեր գրողներին, դերասաններին, վարժապետներին, այլ և մեր բոլոր հասարակական հիմնարկութիւնները։

Եւ այսպէս վարչական ժողովը միաձայն որոշեց օր առաջ ձեռնարկել այդ գործը՝ քանի դեռ ես կենդանի են մեր հարուստներից շատերը,

Սալ-Ման

տեղական գրուածք. «Քրիստոսի Փոխանորդը», Հռոմի պապ Ինոկենտի III-ի կեանքից:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պետական Դումա. մացըրվեց ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի առաջարկութիւնը, որով քրէական պատասխանատուութիւն է սահմանվում անուշադիր ճանապարհորդների համար:

Խոլերայով հիւանդ մնում են 10 հոգի:

Համառուսական աէրոկլուբը միջնորդում է մինիստրների խորհրդի նախագահի առաջ՝ տալու նպաստ միանուագ 250,000 ր. գործիքներ գնելու և ամեն տարի 25,000 ր. ինստրուկտորներ պահելու, գործիքները նորոգելու համար և այլն:

ՊՈԼՏԱՎԱ: Ի յաւերժացումն Ռոմանովների Տան 300-ամեակի տօնման, որոշվեց կառուցել ժողովրդական տուն 25,000 ր. արժողութեամբ:

ԽԱՐԿՈՎ: Երեկոյեան ժամը 6-ին բանտարկեալների անից փորձ արին փախչելու երեք հոգի: Լոմերով սպանելով երկու բանտապահների, խլելով բանալիները և ատրճանակը, նրանք դուրս վազեցին բակը, սպանեցին մի բանտապահի, երեքին վիրաւորեցին մահացու կերպով: Պատի վրա նրանց սպանեցին:

ԿՐԱՍՆԻ-ԵԱՐ: Սոսկալի փոթորիկ է, որ մեծ վնասներ է հասցնում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ:
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ է 50 ԿՈՊ.
Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:

ՈՒԿԼԱԴՆԻԿՈՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:

ՎՆՈՒԿՈՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.:

ՌԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցեր.:

ՄՈՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.:

ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից:

ՆՈՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 1—2 ժ.:

ՍԱՐԱՊ—ներքին և երեխայոց հիւ., ցեր. 12—1 ժ.:

ՏԷՏՐԱՁԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:

ԱՍՓԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2-ը ցեր.:

ԿԻՆ ԲԺ. ԽՈՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,

ՎԷՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—խիրուրգ. հիւ.: ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը:

ՁՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրօտէրապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը:

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ Ա.—սիֆիլիս, վեներական և կաշուի հիւ. ամեն օր՝ 9½—10½ ժ. առ.:

ՊՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլեքտրօտէրապիա. ամեն օր, ժամը 11—12-ը:

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնոզ, ատամների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ, արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:

(կ.) 356. 100—61

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒԴԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

103. 0—125

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող. № 8
(կ. հ.) 564. 100—63

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում:
Ընդունելութիւն { առաւ. ժ. 9—11. / երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(ա. օ.) 1179. 100—30

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների:
Ընդունելութիւնը ամեն օր { 12½—2 ժ. ցերեկվա / 5—7 ժ. երեկոյեան / Կանանց համար՝ 2—3 ժ. ց.
Հասցէն { Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33. / Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 32.
(Հ. ու. կ.) 1124. 100—36

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) / 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(ե.հ.կ.) 909. 100—46

ՖԷԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթումն, գեղերի քսումն (втираніе) և այլն: Բժշկութիւն ցաւագարի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի: Մասսաժ էլեքտրական և ձեռքով: Բժշկական մարմնամարզութիւն: Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների: Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր: Չքաւորներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը: Վորոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9.

(կ. հ.) 913. 50—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԿՕՍՏԻՒՄՆԵՐԻ
Վերջին մօդայով և ձեռնտու գներով.
Տօների պատճառով
Կարելու վարձ { մէկ կօստիւմի համար 10 րուբլի / մէկ վերարկուի » 10 »
Գանովսկայա փողոց, տուն Խօսրօյեվի № 14:
Յարգանօք՝ Շէգօյեան
1291 1—1

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Լաւ վարելահողեր, արօտատեղիներ և անտառ:

Հաղորդակցութիւնը երկաթուղով և խճուղիով: Թիֆլիսից 40 վերստ հեռաւորութեան վրա՝ Մշաղիժվարի—1517 դես., Էրնիս—19 դես.: 50 վերստ հեռաւորութեան՝ Փախրալօ—804 դես., Սաքքինէթի—1000 դես. երկաթի հարուստ հանքով, անտառ—1830 դես. (կաղնի, բոխի և այլ ծառեր): Կամնկա կայարանից 12 վեր. հեռ՝ Օկամի—118 դես. և Բէնիսի—20 դես.: Գօրուց 10 վերստ հեռ.՝ Ձէրտուլի—208 դես.: Այդ բոլոր հողերը կարելի է ձեռք բերել բանկի միջոցով՝ վճարելով մաս-մաս՝ արժէքի մնացորդը—գանազանութիւնը: Կանխիկ դրամով գնողներին ձեռնտու պայմաններ: Պատճէնները և մակարդակներն ուղարկում եմ. կարելի է տեսնել և Թիֆլիսի նոտարների մօտ: Հասցէն՝ С.-Петербургъ, Мойка 81. Кн. Багратіону.

(կ. հ.) 1290. 3—1

ՊԱՏՐԱՍՏԻ ՇՐՋԱԶԳԵՍՏ

2 ՐՈՒԲ. 45 ԿՈՊ.

Կանացի ՊԱՏՐԱՍՏԻ շրջազգեստ (իւբկա) գեղեցիկ, ամուր, նորագոյն նկարներով տրիկօյից, վերջին տարազով կարված, ամեն տեսակ գոյների, ուղարկվում է պօստով առանց կանխավճարի՝ վերադիր վճարով: Շրջազգեստ՝ ամենալաւ կարից և գեղեցիկ զարդարված—2 ր. 75 կ. և 3 25 կ.: Ճանապարհածախսի համար աւել հաշւվում է 55 կ.: 3 շրջազգեստ միասին բերել տուողը ճանապարհածախք չէ վճարում: Պատուէր ուղարկելուց խնդրում ենք ցոյց տալ երկարութիւնը և գօտու լայնութիւնը: Եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք: Հասցէագրել՝ Торгов. Дому ЛЬВА РУБАШКИНА.
ЛОДЗЬ—257.

(կ) (В. 89293) 1284. 13—1

ՏՐԻՊԵՐԸ ԲԺՇԿԵԼԻ Է

Լոյս տեսաւ և ծախվում է

ՏՂԱՄԱՐԴԻ ՏՐԻՊԵՐԸ
ԵՒ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Կազմեց մէդից. ֆէլդշ. Ա. ԵՍԱՅԵԱՆ: Նկարներով: Գինը 20 կօպ. Պարունակում է մանրամասն խորհուրդներ և րեցէպտներ տրիպէրից բժշկվելու: Անհրաժեշտ գիրք է բոլոր չափահասների համար: Ծախվում է նաև նոյն հեղինակի «Տղամարդի սեռական կեանքը». գինը 30 կ: Մնացել են սակաւաթիւ օրինակներ: Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբերգ», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և հեղինակին՝ Семеновская ул. № 9.

(օ. մ.) 1294. 5—1

ՁՐԻ

ուղարկում ենք իւրաքանչիւրին 15 հատ արժէքաւոր ԱՌԱՐԿԱՆԵՐ: Ճանապարհածախքի և փաթաթելու համար պատուիրողը վճարում է 60 կօպ. առարկաները ստանալու ժամանակ: Չը հաւանած առարկան յետ ենք վերցնում ու փողը վերադարձնում: Հասցէն՝ ЛОДЗЬ. Т-ву «УНИВЕРСАЛЬ.»

(В. 88965) 1293. 1—1

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ նոր ստացած գրքերը.

Աշէրօն.—«Գիւղատնտեսական հրատապ հարցերը»	— 20 կ.
Ահարոնեան.—«Խաւարի մէջ»	— 60 »
» «Մոխիրների տակից»	— 40 »
» «Անդունդը»	— 40 »
Այվազեանց Բ.—«Անիի կործանումը»	1 ր. — կ.
Աղայեան, Ահարոնեան, Թումանեան և Փափազեան.—«Հայ գրողներ», Ա. հատոր՝ 2 ր., Բ. հատոր	2 ր. —
Բօէլշէ Վ.—«Մարդու ծագումը»	— 40 »
Գալաչեան.—«Կօօպերացիա» մասն I.	— 20 »
Եսայեան.—«Տրիպէրը և նրա բժշկութիւնը», պատկեր.	— 20 »
» «Տղամարդի սեռական կեանքը»	— 30 »
Նկարիչ.—«Խելքի տարրականներ», վօդեվիլ իրական կեանքից	— 30 »
Շէրենց Գ.—Ալթուն Դէրէսի կամ մի գիշեր Բաղէշի բանտում» 1890—96 թ.	— 20 »
Համոնդ.—«Երիտասարդութեան մեղքերը, սեռական անզօրութիւն տղամարդկանց և կանանց», նկարներ.	1 ր. —
«Տառրակ Տարոնոյ», ազգային երգարան	— 60 »
Իսահակեան.—«Ժողովուրդը ժողովրդական լէլէների մէջ»	— 10 »
Կուկունեան.—«Վերջին օրերս Սախալինում»	— 30 »
Կլէյն.—«Գործնական կաթնատնտեսութիւն», 48 նկարներով	— 50 »
Մուրադեան Մ.—«Սիֆիլիս», պատկերով	— 80 »
Յովհաննիսեան Գ.—«Բանաստեղծութիւններ»	1 ր. 50 »

Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ, Центральной книжной торговлѣ.
1298 3—1
(կ. ե. ու.)

ԸՆԿ. „ԳՐԱՄՄՕՖՕՆ“

Գօլօվինսկի պր. 6. Տէր՝ Գ. Ս. ԴԱՒԻԴՕՎ Գօլօվինսկի պր. 6.

Միակ հաստավաճառ պահեստ ԳՐԱՄՄՕՖՕՆ Ակց. Ընկ. Կովկասում

ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՀԵՍՏ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՄԵՆԱԼԱՒ
ԳՐԱՄՕՖՕՆՆԵՐԻ

Իւրաքանչիւր ծախված գրամմօֆօնի համար տրվում է երաշխաւոր. 5 տարով: Պլաստինկաները—ռուսական և արտասահմանեան երգիչների կատարածները—հատը 65 կ.—15 րուբ.: ՆՈՐՈՒԹԻՒՆ! Ստացված են գրամմօֆօններ առանց բուգօրի, մէկ, երկու և երեք զսպանակներով՝ 63 ր. մինչև 223 ր. հատը:

Կատալօգները ձրի

ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՈՅԼԱՏՐՎՈՒՄ Է
ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՒՄՆ

Ձեռնտու պայմաններով՝ ոչ միայն Թիֆլիսում, այլ եւ ամբողջ Կովկասում: Իւրաքանչիւր ծախված գրամմօֆօնի հետ տրվում է

Երաշխաւորութիւն
5 ՏԱՐՈՎ

Ըստ որում «Գրամմօֆօն» Ընկերութիւնը այդ ժամանակի ընթացքում ձրի կատարում է բոլոր նորոգութիւնները: Երաշխաւորութիւնը վերաբերում է նաև րեգուլյատոր զսպանակներին:

Մաս-մաս վճարումի պայմանները

Ապարատը ստանալու ժամանակ գնողը վճարում է ընդհանուր արժէքի մի երրորդ մասը. Մնացորդ գումարը հանգցվում է ամենամսեայ վճարումներով 4 ամսվայ ընթացքում: Ապրանքը մաս-մաս վճարելու պայմանով ստանալու համար հարկաւոր է հաղորդել ճիշդ կոչումը, անուն-ազգանունը, նոյնպէս և զբաղմունքը:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Զինուորականներին և պետական ծառայութեան մէջ պաշտօնավարողներին, ուսուցիչներին և բժիշկներին թոյլատրվում է մաս-մաս վճարումն առանց ստուգելու նիւթական կարողութիւնը:

1299. 0—1

Լոյս տեսաւ

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ

1911 Թ. „ԾՈՑԻ“ ՕՐԱՑՈՅՑԸ

որը վաճառվում է Կովկասի քաղաքների յայտնի գրավաճառանոցներում և թղթեղէնի խանութներում: Մեծ քանակութեամբ գնողները դիմում են հետևեալ հասցէով. Тифлисъ. Габаевская № 5, Макару Чимишкяну. Մակար Չմշկեանց:

(կ. ե.) 1300. 10—1

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ

ԲԱՄԲԱԿԸ ԵՒ ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Գործնական եւ լրի ձեռնարկ բամբակագործութեամբ պարապողների համար:
20 նկարներով
Գինն է 40 կօպ.

Դիմել՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ“, կամ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և Բագու „Сотрудникъ“-ին:

(ե. կ.) 1233. 10—7

ԱԳԷՆՏ

Յ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆ

ՌԷԿԼԱՄՆԵՐ Եւ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունում եմ տեղական և օտար քաղաքների լրագիրների և ամսագիրների համար՝ ամենաձեռնտու պայմաններով, ՎՃԱՐԸ ՄԱՍ-ՄԱՍ: Ընդունում եմ նոյնպէս կոմիսիոնական ամեն տեսակ պատուէրներ: Ունեմ երկար տարիների փորձառութիւն:

Խնդրում եմ չը շփոթել ինձ միւս ագենտների հետ:

Հասցէն՝ Красногорская, 30. ТЕЛЕФОНЪ № 1041.
Պատուէրները կատարում եմ ճշգրիտ կերպով:
Անձամբ կազմում եմ ամեն տեսակ րէկլամներ:
(օ. մ.) 1139. 25—24

Вѣрный другъ женщинъ
Кремъ КАЗИМИ
Метаморфоза
Продано более ДВУХЪ милліоновъ банокъ
Радикально устраняетъ
Веснушки, угри, пятна, морщины и другіе дефекты лица
Утв. Департ. Торг. и Мануф. за № 4683
Требуйте подпись

(П. 111473.) 1184. 9—5

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հիմնել ենք առևտրա-յանձնարարական և ներկայացուցչական

ԳՐԱՍԵՆԵԱԿ,

որտեղ ընդունում ենք ընդհանրապէս զանազան առևտրական և առանձնապէս թարմ և չորացրած մրգեղէնի, կօնսերվների և պիւրէների սպառման յանձնարարութիւններ:

Խնդրում ենք դիմումի հետ չը մոռանալ նմուշներ ուղարկել:

Յարգանօք՝ Զ. Ն. ԽՐԽՐԵԱՆՑ եւ Տ. Զ. ԲԱԽՇԻՆՕՎ

Հասցեներ { С.-Петербургъ, Петербург. ст., Большой пр. 92. / Тифлисъ, Елизаветинская, 192.

(կ.) 973. 15—14

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՁՐԻ

ՆՄՈՒՇՆԵՐԸ և գները բարձր, միջակ և ցածր տեսակի ԱԼԻՒՐՆԵՐԻ՝ կրուպչատկա, սեանկա, ռազմօլ, նաև զանազան տեսակ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ: Ունեմ յայտնի ֆիրմաների ներկայացուցչութեան իրաւունք և պատրաստում եմ ալիւր իմ սեփական ցորենից զանազան կայարաններում:

Որոշ շրջանների համար տալիս եմ ներկայացուցչութեան իրաւունք:

Դիմեցէք՝ СТАВРОПОЛЬ-губ. Мисаку А. ФАЛАКЯНЦУ.
Հեռագրի համար՝ СТАВРОПОЛЬ-губ. ФАЛАКЯНЦУ.
Յարգանօք՝ Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ
(հ. կ.) 124[illegible]. 18—6

Լոյս տեսաւ եւ վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ԾՈՑԻ եւ ՊԱՏԻ

1911 Թ. „ՇԻՐԱԿ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
Օրացոյցները
XIII տարի

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ—320 երես

ՅԱՒԵԼՈՒԱԾԸ պարունակում է մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ և կշիռ, դրամներ և արժէքաւոր թղթեր: Վարձատրութիւն դատական պրիստաւների, նոտարների, երդուեալ-հաւատարմատարների: Պօստ և և հեռագիր, պօստային օրէնքներ, խնայողական գանձարաններ: Զինուորագրական օրէնքներ, նորակոչ զինւորների չափը: Անցագիր և բողոքելու ատեաններ: Կտակի և պայմանագրերի օրինակներ: ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.—Ռուսաստանի ազգաբնակութիւնը, նրա աճումն ու խտութիւնը, կեանքի միջին հասակը, ազգերի թիւն ըստ հասակի, դաւանութեան և պարապմունքի: Գաղթականութիւն: Ժողովրդական կրթութիւնը. նրա ծախսերը, գրագիտութեան չափը, դպրոցներ Զօրքը. զանազան պետութիւնների զինուորական ծախսերն ու ույժը: Ժողովրդի առողջապահական դրութիւնը: Պետական եկ և մուտքը: Հոգեւորականութիւն: ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.—Կեանքի նպատակը, օդը, կեանքի աղբիւր, չափաւորութիւն, խմիչքներ, կաշուի հոգատարութիւն, առողջապահական կանոններ, պատգամներ և իմաստներ: ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ.—Մեղուաբուծական. մեղուների մայր տալը, բռնածու և բուռ մեղուներ, ընտանիքների միացնելը, փեթակների մաքրելը, ցեց, փոյլուծութիւն, մեղուների մայրը, կերակրելը, գողութիւնը, արհեստական ժամաթերթեր և այլն: ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ.—Կաթնատու կովեր, կովերի կթելը, կաթի կեղծելը, բժշկական խորհուրդներ: ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ.—Խրատներ շերամապահներին: ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ.—Գիսաւոր աստղեր, միգամածներ, աստղերի հեռաւորութիւնը, աստղ-արեգակներ: ԳԻՏԱԿԱՆ.—Մարդու ծագումը, օդանաւեր և օդային թռիչքներ: ՊԱՏՄԱԿԱՆ.—Պարը զանազան ազգերի մէջ, ապրիլի 1-ին խաբելու սովորութեան ծագումը: ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ.—«Առանձին տեսարաններ», «Հօր խրատը որդուն», «Աչք և արցունք», «Աշմարտութիւն», «Ծիծեռնակների ծնունդը», «Ճաշի ժամը», «Սրտի հէքիաթը», «Արցունքի լիճը», «Ինչ է սէրը», «Մարդկութեան պատմութիւնը», «Համբոյր», «Բաղդաւորների խնճոյքը»: ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ.—Դիմագուշակ, բժշկութիւնը հին ժամանակներում, ցաւի համբերող և ցաւ չը զգացողներ, զարմանալի ձմեռներ և ձմեռ ամառներ: ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.—Հանելուկներ, խնդիրներ, խաղեր, րեբուսներ, զուարճալի վիճակացոյց: ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ.—Երկաթուղի և շոգենաւեր:

150 ՊԱՏԿԵՐՈՎ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ 150 ՊԱՏԿԵՐՈՎ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ առաջին երեսների վրա տպագրված են հայ և օտար հեղինակների ու գործիչների պատկերներ, այլ և երբ պետական և դպրոցական հիմնարկութիւնները ազատ են պարապմունքից, ընտիր մտքեր, աֆորիզմներ, հարուստ ժամանակագրութիւն, բանաստեղծական ընտիր քառեակներ: Երկրորդ երեսների վրա՝ ազգային տօների բացատրութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բացատրութիւններ, առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, արևելեան ազգերի կեանքից, զուարճալի պատմութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և այլ ազգերի կեանքից, հետաքրքրական թւեր և տեղեկութիւններ: Ազգային քնար. բանաստեղծութիւններ, ոտանաւորներ, աշուղական խաղեր, սիրոյ երգեր, զուարճալի անեկդօտներ մեծ մարդկանց կեանքից: Գիւղատնտեսական գիտելիքներ, խոհարարական խորհուրդներ, տնային խաղեր: Ժողովրդական առածներ, երգեր, լէլէներ, երգիծաբանական հատուածներ, ծիծաղաշարժ նոր առակներ և այլն:

ՏԱԽՏԱԿԸ պատրաստված է լիտօգրաֆիայում մօտ տասը գոյնով, յայտնի նկարչի վրձինի գործ, եւրոպական յայտնի հրատարակութիւնների նմանողութեամբ, ճակատին տեղաւորված է Անիի աքանչելի տեսարաններից մէկը:

Գները՝ պատինը—50 կօպ., ծոցինը—20 կ., գումարով գնողներին զեղչ:

Դիմել՝ Александрополь. типографія „Ширакъ“, Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն կանխավճար: Աւելի մանրամասն բովանդակութիւնը, առանձին տպագրված, ցանկացողներին կուղարկվի ձրի:

Ալէքսանդրապօլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով:

(կ.) 1248. 6—3

ЕЛКА ПО ПОЧТѢ

Болѣе 21-й тысячи семей получили къ прошлому Рождеству наши коллекціи украшеній для ёлки и подарки изъ Москвы по почтѣ, безъ хлопотъ и лишнихъ расходовъ.

ИЗЯЩЕСТВО и ДЕШЕВИЗНА КОЛЛЕКЦІЙ ОБЩЕИЗВѢСТНЫ.
РАСХОДЫ ПО ПЕРЕСЫЛКѢ И УПАКОВКѢ ВЪ ЕВРОПЕЙСК. РОССІЮ ЗА СЧЕТЪ ФИРМЫ,
въ Азіатскую добавляется по таксѣ.

ВЫСЫЛКА БЕЗЪ ЗАДАТКА.

Коллекція A изъ 106 предм. 1 р. 90 к.
Коллекція B изъ 155 предм. 2 р. 50 к.
Коллекція C изъ 218 предм. 3 р. —
Коллекція D изъ 276 предм. 4 р. —
Коллекція E изъ 316 предм. 5 р. —
Съ пересылкой.

Коллекція F изъ 409 пр. 8 р., кол. G изъ 465 пр. 10 р., кол. K изъ 622 пр. 15 р., кол. L изъ 722 пр. 20р., кол. M изъ 908 пр. 25 р., кол. N изъ 1200 пр. 40 р. съ пересылкой.

Новость! Наборъ изъ 20-ти красивыхъ бездымныхъ фейерверковъ для ёлки. Цѣна 85 к.

РОЖДЕСТВЕНСКІЙ БАЗАРЪ
И. ГЛАЗУНОВА, Москва, Столешниковъ пер., № 8.

БЕЗПЛАТНО описаніе коллекцій и иллюстриров. каталогъ подарковъ и новостей.

(կ.) (М.) 1253. 2—2

Типографія „Экономія“, [illegible] № 2.